

ԱԱ

Տ. ՀԱՅՐԻԿ ԱԲԵՂԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԾՆՆՊՈՑ ԳՐՔԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՎԿԱՅԱԿՈՉՈՒՄՆԵՐԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԴՐԱՍԽԱՆԱԿԵՐՏՑՈՒ ԵՎ ԹՈՎՄԱ ԱՐԾՐՈՒՆՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Իններորդ դարը Հայաստանի համար նշանավորվեց Արաբական խալիֆաթի դեմ մղված պայքարով, որի արդյունքում 885 թ. վերականգնվեց Հայոց թագավորությունը Բագրատունյաց իշխանությամբ, իսկ տասներորդ դարի առաջին տասնամյակներն անցան նվաճված անկախության պաշտպանությամբ, որին այնուհետև հաջորդեց տևական խաղաղության մի շրջան, որը հայտնի է որպես խաղաղ շինարարության դար:

Անկախության ոգորումներով և խաղաղ շինարարությամբ հատկանշված այս դարը մեր մատենագրությանը տվել է երկու նշանավոր պատմիչներ՝ Հովհաննես Դրասխանակերտցի և Թովմա Արծրունի: Դարաշրջանն իր կնիքն է դրել երկու պատմիչների ստեղծագործությունների վրա՝ պայմանավորելով թեմատիկ, գաղափարական և կառուցվածքային մի շարք ընդհանրություններ, որոնցից ամենացայտունը Սովսես Խորենացու «Հայոց պատմության» ազդեցությունն է: Երկու ստեղծագործություններն էլ գրված են Պատմահորը բնորոշ խոր հուզականությամբ, հայրենասիրական մեծ շնչով: Նրանց գործերում ևս պատմության լարված կետերում հնչում է ողբը, և որ ամենակարևորն է, Խորենացու հետևողությամբ, նրանք ևս հայոց պատմությունը սկսում են Ծննդոց գրքից՝ Նոյի սերունդներից բխեցնելով հայ ժողովրդի ծննդաբանությունը և ծագումնաբանությունը: Ահա այս պատճառով Դրասխանակերտցու պատմության 1-15 գլուխների սկզբնաղբյուրը Խորենացին է: 15-19-րդ գլուխները գրվել են Սեբեոսի հետևողությամբ: 20-րդ գլխում, ուր նկարագրվում են արաբական սկսված արշավանքները՝ Ղևոնդի: Խորենացու Պատմության նման Դրասխանակերտցու և Թովմայի գործերը ևս բաժանվում են երեք մասի՝ խորհրդանշելով եռամաս կառուցվածքը՝ սկիզբ, կատարումն և ավարտ, որոնց հաջորդում է հեղինակային ամփոփումը՝ Խորենացու մոտ Ողբը, իսկ այս երկու պատմիչների մոտ հուզախառն վերջաբանները: Անհրաժեշտ է նշել, որ թեև այս երկու երկերն էլ ունեն եռամաս կառուցվածք, սակայն իրականում նրանք բաժանվում են երկու մասի. առաջինը՝ Ծննդոց գրքից մինչև սասունցիների 850 թ. բարձրացրած ապստամբությունը և երկրորդ մասը՝ այս ապստամբությանը հաջորդող շրջանը՝ մինչև 923-24 թթ.:

Դրասխանակերտցու և Թովմայի երկերին բնորոշ է մի կարևոր ընդհանրություն ևս՝ նրանց Պատմությունների շարադրանքում կատարվող համեմատություններով, ուղղակի և անուղղակի վկայակոչումներով մեծ տեղ է տրված Աստվածաշնչին և Սուրբ Գրքից կատարվող վկայակոչումներին: Սուրբգրային պատմությունը ասես շարունակ հարաբերվում է Հայոց պատմության հետ: Մ. Աբեղյանը այս հարցին անդրա-

դարձել է թե՛ Դրասխանակերտցու և թե՛ Թովմայի մասին գրելիս: Դրասխանակերտցու Պատմության մասին Աբեղյանը գրում է. «Ս. Գրքից ոչ միայն բազմաթիվ նմանություններ և վկայություններ է մեջ բերում, այլև շատ խոսքեր այնպես աննկատելի գործածում է իր գրվածքի մեջ, որ թվում է, թե իր մտածածները, իր սեփական դարձվածներն են: Նույն ձևով նա օգտվում է Ագաթանգեղոսից և ուրիշներից, մանավանդ Մ. Խորենացուց և Եղիշեից»¹:

«Հայոց հին գրականության պատմության» Թովմա Արծրունուն նվիրված բաժնում էլ Աբեղյանը գրում է. «Լինելով ժամանակակից Հովհաննես կաթողիկոսին Թովման նույնպիսի հայացքների տեր է, ինչ որ Հովհաննեսը. նույնչափ և ավելի ևս ազդվում է Ս. Գրքից և Մ. Խորենացուց»²:

Դրասխանակերտցու և Թովմա Արծրունու Պատմությունների բնագրագիտական քննությունը կատարած Մ. Դարբինյանը գրում է, որ սուրբգրային շատ վկայակոչումներ Դրասխանակերտցին ոչ թե ինքն է կատարել, այլ դրանք վերցրել է իր օգտագործած աղբյուրներից³:

Հայ պատմագրության մեջ ընդունված էր պատմությունը սկսել առաջաբանի խոսքով: Այսպես էին վարվում հատկապես այն հեղինակները, ովքեր իրենց պատմությանը հաղորդում էին ընդհանրական բնույթ, այսինքն այն սկսում էին Արարչագործությունից և հասցնում մինչև իրենց ժամանակը և սկսյալ իրենց ժամանակից, պատմությունը արդեն շարադրում որպես ժամանակի տարեգիրներ: Այս առաջաբաններում պատմիչները ներկայացնում էին իրենց գործի գրության նպատակը, պատմության և պատմության ընթացքի իրենց ըմբռնումները, դրվատական խոսքով դիմում իրենց հովանավորին ու պատվիրատուին, ինչպես Մովսես Խորենացին Սմբատ Բագրատունուն և ճարտասանական ոճով մի ներքին երկխոսություն վարում ընթերցողի հետ, համառոտ թվարկմամբ ներկայացնելով, թե հատկապես ինչի մասին են առավել հանգամանալից գրելու:

Պատկերավոր նման խոսքը, բնականաբար, հիմնվելու էր տարբեր համեմատությունների և զուգահեռների վրա, որի գլխավոր երկու աղբյուրներն էին Սուրբ Գիրքը և նախորդ շրջանի մատենագիրները: Նույն այս օրինաչափությունը գտնում ենք նաև Հովհաննես Դրասխանակերտցու և Թովմա Արծրունու երկերում:

Դրասխանակերտցին ևս իր պատմությունը սկսում է «Յառաջաբան պատմութեան» խորագրված մուտքի ծավալուն մի խոսքով, որի առաջին՝ ավելի քան մեկ պարբերություն կազմող նախադասությունը սկսվում և ավարտվում է Սուրբ Գրային տողերի հետևողությամբ: Առաջին այս նախադասության մեջ այն միտքն է հայտնվում, որ թեև պատմության ընթացքը անհմանալի է, քանի որ կատարվում է աստվածային տնօրինությամբ, սակայն մարդիկ ապավինելով Աստծուն, փորձում են թեկուզ և աղոտ կերպով հասու լինել կատարված դեպքերին:

¹ Մ. Աբեղյան, Պատմություն հայ հին գրականության, գիրք Բ, Երկեր, գիրք Գ, Երևան, 1986, էջ 485:

² Նույն տեղում, էջ 496:

³ **Иованес Драсханакертци**, История Армении, перевод с древнеармянского, вступительная статья и комментарий М. О. Дарбиняна, Ереван, 1986, էջ 25:

Դրասխանակերտցին խոսքի սկզբում այսպես ցանկանալով ասել, որ պատմությանը հասու լինելը վեր է մարդկային գիտակցությունից, այն արտահայտում է «Գործք Առաքելոց»-ում, Յիսուսի հետևյալ խոսքերի հիշատակությամբ.

Դրասխանակերտցի

«Ձդադարումն դարուց, ժամուց և ժամանակաց թեպետև իսկապես զՅօրէ ասաց Բանն ղնել յիւրում իշխանութեան՝ ի բաց միանգամայն տարեալ ի մարդկայնոցս գիտութեանց»⁴:

Աստվածաշունչ

«Ոչ է ձեզ գիտել զժամս եւ զժամանակս, զոր Յայր եղ յիւրում իշխանութեան» (Գործք Ա 7):

Ինչպես տեսնում ենք, այստեղ բառացի համընկնում է ընդգծված կապակցությունը: Գործքի տվյալ համարում ասվում է, թե ձեզ տրված չէ իմանալ այն ժամը և ժամանակը, որը Յայրը կարգեց Իր իշխանությամբ: Այս խոսքերի հիման վրա կատարված ընդհանրացմամբ Դրասխանակերտցին էլ գրում է, որ դարերի և ժամանակների իրար հաջորդելը Բանն ասաց, որ կարգված է Յոր կողմից: Այսպիսով, եթե Գործքում ասվում է, որ Յիսուս ասաց, թե այդ ամենը կարգված է Յոր կողմից, ապա Դրասխանակերտցին միջնադարում ընդունված ձևով Յիսուսի փոխարեն գրում է Բանն, որպես լոգոս, որպես Աստծո խոսք:

Դրասխանակերտցին, ինչպես ասացինք, ծավալուն այս նախադասությունը եթե սկսում է շեշտելով, որ պատմության ընթացքը հասու չէ մարդկային իմացությանը, սակայն վերջում այնուամենայնիվ նշում է, որ պատմությունը ճանաչելի է դառնում Աստծուն ապավինելով և տեղի ունեցածները սերմոն-սերունդ պատմելով: Եվ ինչպես որ անհաս լինելն էր հիմնավորվում Սուրբ Գրքով, այնպես էլ մասնակիորեն մատչելի լինելն է դարձյալ հիմնավորվում Սուրբ Գրքով: Օրինաց Երկրորդ գրքում Տերն ասում է. «Իմացիր կատարվածները և թող հորից որդի այն պատմեն քեզ»: Եվ Դրասխանակերտցին այս խոսքերն է բերում հիմնավորելու համար, որ մարդկային մտքին հասու է պատմությունը գրելը և ներկայացնելը.

Դրասխանակերտցի

«Յիրս յիրս անցեալ զառանցեալ ժամանակաց մատակարարեալ զմեզ, զի դիւրաւ մեզ հեռացելոցս եղիցի հարցանել զհարսն, որք ուսուցեն մեզ և զծերսն, որք պատմեսցեն մեզ» (Էջ 3):

Երկրորդ օրենք

«Յուշ լիցին քեզ աւուրքն յաւիտենից. իմացարուք զամսն ազգաց յազգս. հարցցհարսն քո եւ պատմեսցեն քեզ, եւ ցծերս քո եւ ասասցեն քեզ» (Բ օրենք ԼԲ 7):

Երկու հատվածների զուգադրումից երևում է, թե ինչպես է Դրասխանակերտցին

⁴ Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցույ Դավանութիւն հայոց, Թիֆլիս, 1912, էջ 3 (Այսուհետև Դրասխանակերտցուց բոլոր մեջբերումները կկատարենք այս հրավարակությունից՝ մեջբերման վերջում նշելով միայն բերվող մեջբերման էջը):

Սուրբ Գրքի հիշյալ տողերը միահյուսել իր շարադրանքին՝ նրանց միջոցով արտահայտելով այն միտքը, որ մեզ համար դյուրին է կատարվածները իմանալ մեր հայրերից, ովքեր ուսուցանում են մեզ, և ծերերից, ովքեր պատմում են կատարված դեպքերը:

Համանման ձևով և անգամ առավել ճոխ է Թովմա Արծրունու մուտքի խոսքը, ուր ևս առաջին և բավականին ծավալուն նախադասության մեջ կան երկու ընդարձակ մեջբերում Սուրբ Գրքից:

Եթե հորենացին և Դրասխանակերտցին իրենց պատմությունները սկսում էին Ադամից, ապա շարունակում Նոյով, Թովման իր գործը սկսում է Արարչագործությամբ՝ Ծննդոց գրքի և նրա հայկական մեկնությունների հետևողությամբ ներկայացնելով, թե ինչպես Աստված արարեց աշխարհը: Մինչ բուն արարչագործությանն անցնելը Թովման շեշտում է, որ Աստված առանձնացրեց մարդուն և նրան տեր կարգեց աշխարհի վրա: Քանի որ Հնգամատյանը համարվում է Մովսեսի գրածը, Ծննդոց գրքում մարդու՝ որպես Աստծո պատկերը լինելու մասին խոսքերը Թովման բերում է որպես Մովսես մարգարեի կողմից գրված խոսքեր Աստվածային արարչագործության մասին:

Մինչ մարդկային հասարակության պատմությունը ներկայացնելը, մարդու դերի բացարձակացումը այսպես է արտահայտում Թովման մուտքի իր այս առաջին նախադասությամբ՝ այն հիմնավորելով Սուրբ Գրային հետևյալ երկու վկայակոչումներով.

Թովմա Արծրունի

«Եւ ըստ նմանակերպութեան պատկերի Իւրոյ, յանձնիշխան կամայական կամարարութեանն ձգեալ պատիւ զնա՝ և տէր բոլորակերտ իրողութեանց մակադրեալ զհողանիւթեայ էակս, որպէս ասաց նախամարգարէն Մովսէս. նմանագոյնս ասացեալ և թագաւորազնն մարգարեաշնորհն Դաւիթ՝ *«Վառօք և պատուովք պսակեցեր զնա, և կացուցեր զնա ի վերայ ձեռակերտաց Քոց, և զամենայն ինչ հնազանդ արարեր ի ներքոյ ոտից նորա»*⁵:

Աստվածաշունչ

«Եւ ասաց Աստուած, Արասցուք մարդ ըստ պատկերի մերում» (Ծննդ Ա 26, տե՛ս և Ա 27)

«Փառօք եւ պատուով պսակեցեր զնա. եւ կացուցեր զնա ի վերայ *ամենայն* ձեռակերտաց Քոց. Չամենայն ինչ հնազանդ արարեր ի ներքոյ ոտից նորա» (Սաղմ Ը 7-8):

Ինչպես տեսնում ենք, այստեղ Ծննդոց գրքի տողերի համար ուղղակի վկայակոչում չկա, քանի որ մարդու՝ Աստծո պատկեր լինելը հանրահայտ ըմբռնում է և կարիք

⁵ **Թովմա Արծրունի** – **Անանուն**, Պարմութիւն Տանն Արծրունեաց, Երևան, 2006, էջ 7 (այսուհետև Թովմա Արծրունուց կապարված բոլոր մեջբերումների դեպքում ևս մեջբերման վերջում կնշենք այս հրապարակության համապատասխան էջը):

չկա ուղղակի վկայակոչման, իսկ մարդու՝ աշխարհի իշխան լինելը հավաստող տարբեր վկայակոչումներ կան Սուրբ Գրքում և կապված հեղինակի բուն ասելիքի շարադրանքի բնույթի և հեղինակի նախասիրությունների հետ, կարելի է ընտրել դրանցից որևէ մեկը, և այս դեպքում թուվման ընտրել է Դավիթ Մարգարեի հիշյալ խոսքերը: Ինչպես երևում է ընդգծված տողերից, քանի որ թուվման ուղղակիորեն վկայակոչել է Դավիթ մարգարեին, ուստի և բառացիորեն է բերում Սաղմոսաց գրքի համապատասխան հատվածները: Թուվմայի մոտ սակայն, զարմանալիորեն բացակայում է սաղմոսների՝ այստեղ ընդգծված *ամենայն* բառը, որը ավելի կուժեղացներ պատմիչի ասածը, թե մարդը կարգված է ամենայն ձեռակերտների վրա: Այս բառի բացակայությունը կամ կարող է արդյունք լինել գրչագրական կրճատման և կամ էլ այս բառը բացակայել է թուվմայի օգտագործած ձեռագրում: Անկախ այս մի բառի տարբերությունից, մնացյալ ողջ հատվածը բառացիորեն համընկնում է, որը վկայում է, որ գոնե այս հատվածը թուվմայի ժամանակ նույնական է եղել Սուրբ Գրքի մեր այսօրվա բնագրի համապատասխան հատվածի հետ:

Գիշերը և ցերեկը ներկայացնելով որպես Աստվածային կարգավորվածության արդյունք, որ գիշերը հանգստյան համար է, իսկ ցերեկը՝ աշխատելու, թուվման դարձյալ վկայակոչում է Դավթի սաղմոսները, ապա և Հիսուսի խոսքերը.

Թուվմա

Որպես ասաց սաղմոսերգուն՝ «*ի ծագել արեւուն ելանէ մարդ ի գործս իւր, ի վաստակս ձեռաց իւրոց մինչեւ յերեկոյ*». և Փրկիչն ասաց. «*Պարտ է գործել զգործս մինչև աւուր կայ. գայ գիշեր, յորում ոչ ոք կարէ գործել*» (Թուվմա էջ 7):

Աստվածաշունչ

«Ի ծագել արեւու ժողովին, եւ ի մորիս իւրեանց դադարեն: Ելանէ մարդ ի գործս իւր, եւ ի վաստակս ձեռաց իւրոց մինչեւ յերեկոյ» (Սաղմ ԵԴ 22-23):

«Եւ Ինծ պարտ է գործել զգործս այնորիկ, որ առաքեացն զիս, մինչ աւուր կայ. գայ գիշեր, յորժամ ոչ ոք կարէ գործել» (Հովհ. Թ 4):

Այստեղ ևս երկու դեպքում էլ գործ ունենք բնագրային բառացի համընկնումների հետ: Թուվմայի մոտ ընդգծումները նույնական են Աստվածաշնչի համապատասխան տեղիների հետ, իսկ Սուրբգրային ընդգծված բառերի բացակայությունը թուվմայի մոտ ոչ թե գալիս է բնագրային տարբերությունից, այլ արդյունք է խմբագրական միջամտության: Դավթի Սաղմոսի համապատասխան կապակցությունը թուվման հանել է, որպեսզի շատ չծանրաբեռնի իր ասելիքը և խոսքը լինի առավել կառուցիկ, իսկ երկրորդ դեպքում նա կատարել է համապատասխան կրճատումներ, որպեսզի Հիսուսի՝ Իր համար ասված խոսքերը վերաբերեն ընդհանրապես մարդկությանը: Հիսուսի խոսքերն այստեղ շեշտված այլաբանական բնույթ ունեն և գիշերն ու ցերեկը հարաբերվում են այս աշխարհի կյանքի ու աշխարհի կատարածի հետ, սակայն թուվմայի խմբագրմամբ արդեն ուղղակիորեն կապվում են իր ասելիքի, այն է՝ ցերեկը մարդու գործելու և գիշերը՝ դադար առնելու հետ:

Թովման ևս այնուհետև անցնում է Ծննդոց գրքի պատմությանը, դարձյալ որպես մարդկային կյանքի սկզբնաղբյուր և բոլոր նման վկայակոչումները, որոնք պատմական բնույթի են, այստեղ չենք ներկայացնում:

Ծննդոց գրքի և հաջորդող աղբյուրների թվարկումը հասցնելով մինչև նահապետների շրջանի այն ժամանակահատվածը, որտեղից, ըստ պատմիչի, արդեն սկսվում է նաև Արծրունյաց տոհմի պատմությունը՝ Թովման Խորենացու նման դիմում է իր պատմության պատվիրատուին՝ Վասպուրականի Գրիգոր Արծրունի իշխանին՝ ասելով, թե կատարում է նրա պատվերը՝ իր պատմության մատյանում արձանագրելու այն ամենը, ինչ վերաբերում է Արծրունյաց տոհմի պատմությանը: Ինչպես Թովման է գրում. «Ներքադրեալ ի *յիշատակարանս մատենից* զնախնեացն քոց զագագաբանութիւն» (էջ 9): Այստեղ ընդգծված բառակապակցությունը գալիս է Եզրասի գրքից՝ «Գտցես գիր յիշատակարանաց» (Ա Եզր Ա 33, 42, Բ 22):

Այնուհետև շարունակելով խոսքը՝ ասում է, որ ինքը կգրի Արծրունյաց տոհմի այն հերոսների մասին, ովքեր «վասն Բրիստոսի *պատերազմեալ զքարիոք պատերազմ*, և յաղթանակ կանգնեցին ի վերայ երկրի մինչև յերկինս» (էջ 10): Ընդգծված այս հատվածը վերցված է Պողոս առաքյալի՝ Տիմոթեոսին ուղղված նշանավոր խոսքերից. «Զբարւոք պատերազմ պատերազմեցայ, զընթացսն կատարեցի, զհաւատսն պահեցի» (Բ Տիմ. Դ 7):

Առաջաբանին հաջորդող Առաջին դպրության սկզբում Թովման, թվարկելով իր աղբյուրները, այնուհետև անցնում է բուն պատմությանը,՝ այն սկսելով դրախտից: Ծննդոց գրքի (Բ 8) հետևողությամբ նա գրում է. «Տնկեաց, ասէ, Աստուած զդրախտն յեդեն ընդ Արևելս» (էջ 16): Դարձյալ Ծննդոց գրքի հետևողությամբ նկարագրում է նաև Դրախտից ելնող և երկիրը ոռոգող գետերը.

Թովմա

«...յորդահոս աղբերն, որ արբուցանելով զդրախտն ընկղմի ընդ երկրաւ, և չորեքվտակեան անյաղթ և զօրաւոր գետովք ելանէ յաներևելոյն յերևելի աշխարիս» (էջ 16):

Ծննդոց Գիրք

«Եւ գետ ելանէր յեդենայ ոռոգանել զդրախտն. եւ անտի բաժանի ի չորս առաջս: Անուն միունն Փիսովն. նա է որ պատէ զամենայն երկիրն Եփլատայ... Եւ գետն չորրորդ Եփրատէս» (Բ 9-11):

Ահա դրախտի այս չորս գետերի նկարագրության հիման վրա ընդհանրացված ձևով է Թովման ներկայացնում երկրի ոռոգումը դրախտի չորս գետերի կողմից:

Դրախտում, ըստ այդմ և աշխարհում մարդուն տեր կարգելու մասին գրելիս սակայն, Թովման արդեն հոգևոր առավել մեծ ընդհանրացումների է դիմում, դրախտում երեկոյի իջնելը, մեղք գործելը, դրախտից վտարվելը, ապա և երկրում իջած առաջին գիշերը ներկայացնելով Սուրբ Գրքի վրա հիմնված քրիստոնեական խորհրդաբանության միջոցով, և այն հարաբերելով վախճանաբանական տարբեր ըմբռնումների հետ:

Նկարագրելով դրախտի վայելչությունը, ուր գտնվում էր Ադամը, Թովման ասում

է, որ նա դրախտում արտաքին լույսի կարիք չունենէր: Լույսին վերաբերող այս հատվածը թովման գրել է Հովհաննու Հայտնության Տիրոջ քաղաքի նկարագրության հետևողությամբ:

Թովմա

«...ոչ պիտոյացեալ եկամուտ լուսոյ, որով նսեմասցի առ ի հասանել երեկոյին, ոչ ապաժամանութիւն արեգական առ ի մերժել զմութ գիշերի լուսազգեստ ստեղծութեան...» (էջ 16):

Հայտնություն

«Եւ քաղաքին չէին պէտք արեգական եւ լուսնի, զի լուսաւորեսցեն զնա, քանզի փառքն Աստուծոյ լուսաւորէին զնա յամենայն ժամ» (Հայտն ԻԱ 23, ԻԲ 25):

Ծննդոց գրքում ասվում է. «Եւ առ Տէր Աստուած զմարդն, զոր արար, եւ եդ զնա ի դրախտին փափկութեան գործել զնա եւ պահել» (Ծննդ. Բ 15): Անդրադառնալով այս խոսքերի բացատրությանը՝ Թովման գրում է, որ *գործել*-ը այստեղ չունի աշխատելու իմաստը, որ Դրախտում Ադամը ապրում էր անհոգս կյանքով և որ գործել ոչ թե նշանակում է աշխատել, այլ արդարությամբ գործել, այսինքն պահել աստվածային պատվերը. «Գործել զարդարութիւն և պահել զպատուէրն ասացեալ նմա» (էջ 16):

Տիրոջ պատվիրանները պահելը Թովման այն սակավ գործն է համարում, որով Ադամը կարժանանար բազմերջանիկ կյանքին «ի սակաւում հաւատարիմ լինելով ոչ այնմ և եթ տիրեսցէ տնկոյն, այլ և բազմերջանիկ երկնայնոցն հասցէ կենաց» (էջ 17): Այստեղ Թովման յուրօրինակ մի վերաիմաստավորման է ենթարկել Մատթեոսի Ավետարանի այն առակը, որում պատմվում է տրված քանքարների մասին: Տերը, գովելով քանքարները շահեցնող ծառային, ասում է. «Որովհետև ի սակաւուդ հաւատարիմ ես. ի վերայ բազմաց կացուցից զքեզ» (Մտթ. ԻԵ 23): Ահա այսպես սակավ բաներում հավատարիմ եղող ծառայի առակը Թովման կապել է Ադամի հետ՝ ասելով, որ եթե նա միայն կատարեր Տիրոջ պատվերը և չճաշակեր իմացության ծառի պտուղից, այդ մեկ իսկ (սակավ) պատվերի կատարման համար նա կարժանանար բազմերջանիկ կյանքին:

Առանց Ծննդոց գիրքը վկայակոչելու, սակայն գրեթե բառացի նրանից վերցված նախադասությամբ է Թովման ներկայացնում Ադամի դրախտից վտարվելը.

Թովմա

«Եւ եհան արձակեաց զնա Տէր Աստուած ի դրախտէն փափկութեան՝ գործել զերկիր ուստի առաւ» (էջ 18):

Ծննդոց

«Եւ եհան արձակեաց զնա Տէր Աստուած ի դրախտէն անտի փափկութեան՝ գործել զերկիր, ուստի առաւ» (Ծննդ. Գ 23):

Թովման, ողբալով Ադամի վտարման համար, ասում է, թե ինքն էլ ողբակից դառնալով ուրիշներին, կրկնում է մարգարեի խոսքերը, և բառացիորեն բերում է Դավթի Սաղմոսների հետևյալ տողը. «Մարդ ի պատուի էր և ոչ իմացաւ, հաւասարեաց ա-

նասնոց անբանից և նմանեաց նոցա» (էջ 19, տե՛ս և Սղմ. ԽԸ 13):

Կայենի ծնվելու մասին Ծննդոց գրքում ասվում է. «Եմուտ Ադամ առ Եւա կին իւր, եւ յղացաւ և ծնաւ զԿային. եւ ասէ. *Ստացայ մարդ Աստուծով*» (Ծննդ. Դ 1): Թովման, բացատրելով ընդգծված այս կապակցությունը, գրում է. «Ասէ զնա Ստացուած, թէ և Աստուծոյ, այլ ոչ արժանաժառանգ» (էջ 19): Այսինքն Ադամը մի կանխատեսությամբ Կայենին իր ժառանգը չի համարում և պարզապէս արժանագրում է այն փաստը, որ մարդ է ծնվել:

Համանման ձևով Աբելի ծննդյան համար էլ գրում է, թե նույն կանխատեսությամբ նրան էլ անվանեց լինել սգո որդի. «Կանխաժան իմն ոգւովն Աստուծոյ ասէ զնա գոլ որդի սգոյ»: Աստվածաշնչում Աբելի անվան նման ստուգաբանություն չի տրված և այս մեկնաբանությունը Թովման ամենայն հավանականությամբ վերցրել է որևէ պարականոն պատմությունից կամ Ծննդոց մեկնություններից:

Ծննդոց գրքում ասվում է, որ Աստված ասաց. «Ամենայն որ սպանանէ զԿային, եօթն վրէժս լուծցէ» (Ծննդ. Դ 15): Թովման, վկայակոչելով այս խոսքերը, փորձում է բացատրել դրանց իմաստը. «Իսկ ասելն՝ ամենայն որ սպանանէ զԿայեն եօթն վրէժս լուծցէ, եօթն արդեօք իցեն մեղանացն պարտիք» (էջ 19): Կայենի մեղքերը թվարկելով՝ Թովման նաև բառացիորեն վկայակոչում է Տիրոջ՝ Կայենին ուղղված հետևյալ խոսքերը. «Եթէ ուղիղ մատուցանէս և ուղիղ ոչ բաժանես՝ մեղար» (Հմմտ. Ծննդ. Դ 7):

Կայենի վեցերորդ մեղքը Թովման այն է համարում, որ նա եղբորը սպանելուց հետո խաբեց Աստծուն և հանդգնաբար պատասխանեց Նրան և թվարկման շարքի այս վեցերորդ մեղքի հիշյալ բացատրությամբ դարձյալ գրեթե բառացիորեն մեջ է բերում Կայենի երկու խոսքերը. «Վեցերորդ՝ զի խաւարաւ չարեացն պատրուակեալ զոգին, մինչև զԱստուած ևս անգէտ կարծելով՝ լրբենի երեսօք պատասխանէր, հարցեալ ցնա. «Ո՞ւր է Աբել եղբայր քո»՝ ասէ. «Չգիտեմ. միթէ պահապան իցեմ եղբօրն իմոյ» (հմմտ Ծննդ. Դ 9):

Կայենի համար այնուհետև Ծննդոց գրքում ասվում է. «Եւ ել Կային՝ յերեսաց Աստուծոյ, եւ բնակեցաւ յերկրին Նայիդ յանդիման Եդեմայ» (Ծննդ. Դ 16): Այս խոսքերի բացատրությունը հիմնելով եբրայական հին ավանդությունների վրա, Կայենի համար Թովման գրում է. «Եւ ելեալ յերեսացն Տեառն՝ սնոտի տաժանմամբ շինէր քաղաք, չհամարեալն յազգս զղջալից և արդարաքարոզ մահապետացն» (էջ 20):

Ադամի հաջորդների թվարկումը շարունակելով ըստ Սուրբ Գրքի՝ Թովման բնագրային վկայակոչումներ կամ մեկնաբանություններ չի կատարում մինչև Ենովքի մասին գրելը: Վերջինիս համար վկայակոչում է Հուդայի թղթի տողերը.

Թովմա

«Մարգարեացաւ *ութերորդն* յԱդամայ Ենովք և ասէ. «Ահաւասիկ եկն Տէր բիւրովք հրեշտակօք առնել դատաստան ըստ ամենայնի, և յանդիմանել զամենայն ամբարիշտս վասն գործոց իւ-

Հուդա առաքյալ

«Մարգարեացաւ վասն նոցա եւ *եօթերորդն* յԱդամայ Ենովք, եւ ասէ. Ահաւասիկ եկն Տէր բիւրովք սրբովք հրեշտակօք, առնել դատաստան ըստ ամենայնի, եւ յանդիմանել զամենայն ամպարիշտս

րեանց, զոր ամբարշտեցան» (էջ 21):

վասն գործոց իւրեանց զոր ամարշտեցին (Յուդա 14-15):

Ինչպես երևում է ընդգծված բառերից, ծավալուն այս պարբերությունում բնագրային երկու տարբերություններ միայն կան: Թովման յոթերորդի փոխարեն ութերորդ է գրում, տալով հետևյալ բացատրությունը. «Եւ զի զթիւ եօթներորդիս յաւելուածով ասաց ութս լինել, թուի ինծ թէ և զարդարն Զաբէլ ի սոյն շարի կարգեալ համարեցաւ. իսկ եթէ ընդէ՞ր ոչ ի ծննդաբանութեան՝ վասն զի ոչ իսկ ունէր զաւակ Զաբէլ» (էջ 22): Այսպիսով, այստեղ Թովման հետևում է այն ըմբռնմանը, որ աղջիկները ծննդաբանության մեջ չէին հաշվվում, ինչպես որ ընդունված էր հրեական ավանդույթով:

Թովման չի բերել նաև *սրբովք* բառը: Առաքյալի խոսքի շարունակության մի փոքր մասը նա բերում է վերաշարադրանքով, ապա գրեթե բառացի վկայակոչմամբ.

Թովմա

«Աստանօր և զհայիոյական բարսն նշանակէ, և վասն ամենայն խիստ բանից, զոր խօսեցան զնմանէ մեղաւորք և ամբարիշտք» (էջ 21- 22):

«Եւ յանդիմանել զամենայն ամապարիշտս վասն գործոց իւրեանց, զոր ամարշտեցին. եւ վասն ամենայն խիստ բանից, զոր խօսեցան զնմանէ մեղաւորք եւ ամարիշտք (Բ 15-16):

Շարունակելով ծննդաբանության ընթացքը՝ այնուհետև Թովման բառացիորեն մեջ է բերում Աստծո որդիների՝ մարդկանց կնության առնելու տողը.

Թովմա

«Քանզի տեսեալ, ասէ. որդւոցն Աստուծոյ զգտներսն մարդկան, զի գեղեցիկ էին՝ առին իւրեանց կանայս յամենեցունց զոր ընտրեցին» (էջ 22):

«Տեսեալ որդւոցն Աստուծոյ զգտներս մարդկան զի գեղեցիկ էին, առին իւրեանց կանայս յամենեցունց զոր ընտրեցին» (Ծննդ. 2 2):

Բառացիորեն են համընկնում և մարդկանց ու երկրի ապականությանը վերաբերող Ծննդոց գրքի նույն գլխից վկայակոչված հետևյալ երկու հատվածները (2 5 և 2 12): Ոչ թե բառացի մեջբերմամբ, այլ բնագրի հետևողությամբ է բերված հետևյալ նախադասությունը. «Եւ ստրջացաւ Աստուած, զի արար զմարդն ի վերայ երկրի» (Ծննդ. 2 6): Թովման գրում է. «Եւ ստրջացաւ Աստուած քանզի արար զմարդն» (էջ 22):

Նույն տապանի շինության պատմությունը Թովման պատմելով Ծննդոց գրքի հետևողությամբ՝ բառացի մեջբերում չի կատարում, միաժամանակ նա հետևում է հին մատենագիրներին և եբրայական ավանդություններին:

Միաժամանակ Թովման նշում է, որ Տերը քանիցս փորձեց չար ճանապարհից ետ դարձնել մարդկանց, որովհետև Աստված, լինելով բարի, չի ցանկանում մեղավորների կորուստը, այլ նրանց փրկությունն է կամենում: Ասվածը հավաստելու համար

վկայակոչում է Եզեկիել մարգարեի խոսքերը ոչ թե ուղղակի վկայակոչմամբ, այլ այն անուղղակիորեն երրորդ դեմքով բերելով.

Թովմա

«Կենդանի եմ ես Տէր Տէր, զի ոչ կամիմ զմահ մեղաւորի, որպէս դառնալ նորա ի չար ճանապարհէն և կեալ» (էջ 23):

Եզեկիել

«Մի՞թէ կամելով կամիցիմ զմահ մեղաւորին, ասէ Տէր Տէր՝ որպէս զդառնալ նորա ի չար ճանապարհէ եւ կեալ» (ԺԸ 23):

Ջրհեղեղից հետո Աստված Նոյին ասում է. «Եւ ամենայն զեռուն որ է կենդանի, ձեզ լիցի ի կերակուր. իբրեւ զբանջար խոտոյ ետու ձեզ զամենայն: Բայց զմիս արեամբ չնչոյ մի ուտիցէք» (Ծննդ. Թ 3): Այս երեք նախադասությունների միախառնմամբ սակայն, Թովմայի մոտ ստացվել է հետևյալ անհասկանալի նախադասությունը. «Յետ ջրհեղեղին հրամայեալ՝ կերիջիք միս իբրև զբանջար խոտոյ» (էջ 23):

Թովման, բառացիորեն բերելով Տիրոջ՝ Աստծո որդիների և մարդկանց դուստրերի ամուսնությունից ծնված սերնդի համար ասված «Մի մնասցէ ոգի Իմ ի մարդկանդ յայդմիկ յաւիտեան, վասն լինելոյ դոցա մարմին» (Ծննդ. Զ 3), այնուհետև ներկայացնում է այս խոսքերի իր մեկնությունը, թե «այսինքն մարմնասէրք և ոչ հոգիասէր» (էջ 24):

Սուրբ Գրքից հաճախ գրեթե բառացի ծավալուն հատվածներ բերող Թովման բավականին ազատ վերաշարադրանքով է ներկայացնում Նոյին ուղղված Տիրոջ պատվերը, թե մտիր տապան, թեև Թովման Տիրոջ խոսքերը բերում է հենց առաջին դեմքով, որպես Նոյին ուղղված պատվեր.

Թովմա

«Մուտ ի տապան դու և որդիք քո և կանայք որդւոց քոց. զի ահա ևս եօթն օր՝ և ածից ջրհեղեղ ջուրց ի վերայ երկրի՝ սատակել զամենայն, յորում է շունչ կենդանի» (էջ 24):

Ծննդոց գիրք

Եւ ասէ Տէր Աստուած ցՆոյ. Մուտ դու և ամենայն տուն քո ի տապանդ. զի զքեզ տեսի արդար առաջի իմ յազգիդ յայդմիկ. և յամենայն անասնոց սրբոց մոյծ ընդ քեզ եօթն եօթն արու եւ էգ: Եւ յամենայն անասնոց որ ոչ են սուրբ, երկուս երկուս արու եւ էգ... Եւ ածից Ես անձրև ի վերայ երկրի զքառասուն տիւ և զքառասուն գիշեր և ջնջեցից զամենայն հասակ զոր արարի յերեսաց երկրէ» (է 1-4):

Թովման ջրհեղեղի ահեղ տարերքը ներկայացնում է Ծննդոց Գրքի համապատասխան հատվածի միջոցով, սակայն ոչ որպես սուրբգրային վկայակոչում, այլ որպես Սուրբ Գրքի հետևողությամբ և նրանից գրականորեն ազդված նկարագրություն.

Թովմա

«Որով պատառեցան ամենայն աղբերք անդնդոց, և սահանք երկնից բացան անընդմիջաբար երկրի և երկնային ծովուն լինել» (էջ 25):

Ծննդոց գիրք

«Եւ պատառեցան ամենայն աղբիւրք անդնդոց բազմաց, եւ սահանք երկնից բացան, եւ եղեւ անձրեւ ի վերայ երկրի» (էջ 11-12):

Խորենացու նման Թովմա Արծրունին ևս շարունակելով Նոյի երեք որդիների ծննդաբանությունը, այն հասցնում է մինչև Բելի ժամանակը: Բելի մասին գրելիս բառացիորեն, առանց որևէ բնագրային տարբերության վկայակոչում է Բելի մասին Երեմիա մարգարեի հետևյալ խոսքերը. «Ես խնդրեցից զվրեժ ի Բելայ ի Բաբելոն, եւ հանից զոր եկուլն ի բերանոյ նորա» (Երեմ. ԾԱ 43-44):

Թովման գրելով նահապետների շրջանի այն անձերի մասին, ովքեր վախճանվեցին իրենց հայրերից առաջ, նրանց կորստյան համար հայրական սիրո չափը ներկայացնում է Սողոմոնի Իմաստության հետևյալ օրինակի միջոցով՝ որոշակի վերախմբագրմամբ վկայակոչելով Սողոմոնից բերվող նախադասությունը.

Թովմա

«Հայր թախծեալ տարաժամ սգով՝ վասն վաղամեռիկ լինելոյ որդւոյ արար պատկեր» (էջ 30):

Իմաստություն Սողոմոնի

«Զի տարաժամ սգով թախծեալ հայր՝ վաղամեռիկ լինելոյ որդւոյ իւրոյ արար պատկեր» (Իմաստ. ԺԴ 15):

Թովման ևս գրում է Հայկի և Բելի՝ միմյանց հետ մարտնչելու մասին՝ որպես իր սկզբնաղբյուր և գրական բարձրագույն հեղինակություն վկայակոչելով Խորենացուն: Հայկի և Բելի երկխոսությունից նա բերում է նաև Հայկի՝ Բելին ուղղված հետևյալ անարգական խոսքերը, որոնք վերցված են Չորրորդ թագավորության գրքից, ուր դրանք ասվում են միանգամայն այլ իրավիճակում.

Թովմա

«Ոչ միայն զի չես աստուած՝ այլ շուն ես դու, և երամակ շանց» (էջ 31):

«Ո՞վ է ծառայ քո շուն մի, եթե առնիցե զբանդ զայդ» (Դ Թագ. Ը 13):

Իր պատմության այս երրորդ գլխում Թովմա Արծրունին, խոսելով դրախտի տեղադրման և սնուտի տարբեր հավատալիքների մասին, անդրադառնում է նաև կրակի ու արեգակի պաշտամունքին: Նման ունայն հավատալիքներ ունեցողների համար պատմիչը վկայակոչում է Պետրոս առաքյալի խոսքերը. «Եւ կորուստ նոցա ոչ նիրհեսցէ» (էջ 38 հմմտ. Բ Պետր., Բ 3): Այնուհետև վկայակոչում է Պողոս առաքյալի խոսքերը, որոնք ևս նման հավատալիքներին են վերաբերում (Հռովմ. Ա 21-23): Առաքյալի խոսքից բերվող ծավալուն հատվածը բառացիորեն համընկնում է, բացառությամբ վերջին կապակցության.

Թովմա	Առ Հռովմայեցիս
«Ի մմանութիւն գոյիցս եղծանելեացս»	«Ի մմանութիւն պատկերի եղծանելի մարդոյ»

Այս տարբերությունը վստահաբար բնագրային չէ, այսինքն Թովմայի օգտագործած Աստվածաշունչը մման տարընթերցված բնականաբար չի ունեցել: Սա խմբագրական տարբերություն է: Թովման այս փոփոխությունը կատարել է, որպեսզի առաքյալի խոսքի շեշտադրումը ուղղի եղծանելի գոյերի, այսինքն հրի և կրակի դեմ, որոնք ոչ թե արարիչ են, այլ արարված: Այսինքն, առաքյալը այստեղ խոսում է այն մասին, որ մարդիկ Աստծո պատկերը փոխեցին մարդադեմ և կենդանակերպ կուռքերի պատկերով:

Նույն ձևով, իր խոսքի հաջորդող շարադրանքին հարմարեցնելու համար Առաքյալի այս խոսքի նախորդ հատվածը, նրա սկիզբը ենթարկում է որոշակի վերախմբագրման, որպեսզի այն առավել լավ կապակցվի և համահունչ դառնա իր պատմության ընդհանուր շարադրանքին:

Թովմա	Առ Հռովմայեցիս
«Ձի աներևոյքն աստուածայինք յարածոց աստի, ասէ, իմացեալ տեսանին, այսինքն մշտնջենաւորութիւն և զօրութիւն և աստուածութիւն նորա, զի ոչ գտանիցին ամենևին տալ պատասխանի» (էջ 39):	«Ձի աներևոյքն նորա ի սկզբանէ աշխարհի՝ արարածովքս իմացեալ տեսանին, այսինքն է՝ մշտնջենաւորութիւն եւ զօրութիւն եւ աստուածութիւն նորա, զի ոչ գտանիցեն ամենևին տալ պատասխանի» (Հռովմ Ա 20):

Ասվածի որպես կանոնական հիմնավորում բերում է նաև Ղևտացոց գրքից Տիրոջ հետևյալ պատվերը՝ այդ պատվերը ևս որոշակի վերախմբագրմամբ և կրճատմամբ հարմարեցնելով իր բուն ասելիքին:

Թովմա	Ղևտացոց
«...զճարպ մեռելոտոյ տանել ի գործինչ արտաքին, այլ ոչ թէ ի կերակուր» (էջ 40):	«...եւ ճարպ մեռելոտոց եւ գազանաբեկաց՝ լինիցի յամենայն գործ, բայց ի կերակուր մի ուտիցի» (է 23):

Թովմա Արծրունու Պատմության Չորրորդ դպրության չորրորդ գլխից սկսած առավել է նվազում պատմության՝ Սուրբ Գրքի հետ ընթանալը և այստեղից Թովմայի գլխավոր աղբյուրն է դառնում Եվսեբիոս Կեսարացու «Ժամանակագրությունը»⁶:

Ժամանակային հետագա ընթացքով հիմնադրող գլխից էլ արդեն Թովմայի կարևոր սկզբնաղբյուրն է դառնում Խորենացու պատմությունը:

Վերստին վերադառնալով Դրասխանակերտցուն՝ ասենք, որ Խորենացու մման

⁶ Տե՛ս Եսեբիոսի Պամփիլեայ Կեսարացոյ Ժամանականք երկմասնեայ, Վենեթիկ, 1818, աշխար. Մ. Ավգերյանի:

նա ևս հայ ժողովրդին սերված է համարում Նոյի Հաբեթ որդուց, ուստի ասում է, որ Նոյի մյուս երկու որդիներից կառանձնացնի նրան և կշարադրի նրա ծննդաբանությունը, ինչպես որ Խորենացին է նախ ներկայացնում Նոյի երեք որդիների ճյուղագրությունը, ապա պատմությունը շարունակում Հաբեթից սերված Թորգոմի որդի Հայկ Նահապետի ազգաբանությամբ, որն էլ դառնում է հայ ժողովրդի առաջին նահապետների ազգաբանությունը:

Դրասխանակերտցին, այս առաջաբանի վերջում գրելով, թե կյանքը նորոգվեց Նոյի միջոցով, ասում է, թե ջրհեղեղով ողողված աշխարհը փրկվեց մի չնչին փայտի միջոցով, այսինքն Նոյյան տապանի: Չնչին փայտի այս պատկերը ևս վերցված է Աստվածաշնչից՝ Սողոմոնի իմաստության գրքից.

Դրասխանակերտցի

«Եւ այսպէս չնչին փայտի առհասարակ գնոսա հաւատացեալ պահեաց առ ի նախախնամեալ նոքօք զկրկին նորոգութիւն երկրի» (էջ 9-10):

Իմաստ.

«Վասն որոյ և զհեղեղեալ երկիր՝ միւսանգամ փրկեաց իմաստութիւն՝ չնչին փայտիւ արդարոյն նաւապետեալ» (Ժ 4):

Սողոմոնի այս մեկ նախադասությունը, պահելով իր իմաստը, ահա այսպես ընդլայնվել և բացվել է Դրասխանակերտցու մոտ՝ դառնալով մի յուրօրինակ մեկնություն Աստվածաշնչի հիշյալ համարի, շեշտելով, որ այդ չնչին փայտին ապավինեց Նոյը և այն պահեց ոչ միայն Նոյին, այլև նրա սերունդը, ինչպես նաև կենդանական աշխարհը:

Ինչպես տեսնում ենք, այստեղ Դրասխանակերտցին ոչ թե վկայակոչում է Սողոմոնի խոսքերը՝ դրանցով իր ասածը հիմնավորելու համար, այլ պարզապես օգտագործում է դրանք, այսինքն նրա մտածողությունը խարսխված է Սուրբ Գրքի վրա և ոչ թե միայն մտածական իմացական առումով է նա իր խոսքը կառուցում Աստվածաշնչից բերված օրինակների վրա, այլ նրա մտածողության եղանակն իսկ հիմնված է Աստվածաշնչի վրա:

Դրասխանակերտցու պատմության այս առաջաբանին հաջորդող հինգ գլուխներում Սուրբ Գրքից նման վկայակոչումներ չկան, քանի որ խոսքը վերաբերում է նախաքրիստոնեական շրջանի հայ նահապետներին, որոնք արդեն առանձնացված են Նոյի որդիների ընդհանուր ճյուղագրությունից և մասն են կազմում Հայոց պատմության: Այս գլուխներում Սուրբ Գիրքը ոչ թե վկայակոչման, հավաստման ու պատկերավորման միջոց է ծառայում, այլ պատմական սկզբնաղբյուր նահապետական այս ճյուղագրությունը բխեցնելու համար: Ասվածը բնորոշ է նաև ոչ միայն Խորենացուն, այլև, ինչպես տեսանք, Թովմա Արծրունու Պատմության նույն այս ժամանակահատվածին, որը ձգվում է մինչև Աբգարի թղթի պատմությունը: